

Իլիս Արուստան

«ԴՂԵԱԿ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դղլակ՝ բառի ստուգաբանությունը հայերենում դեռևս պարզաբանված չէ, ինչպես այդ ակնհայտ երևում է պրոֆ. Հր. Անառյանի «Հայերեն արմատական բառարան»-ից (հատոր Բ., էջ 568)։ Այդ աշխատության մեջ բառիս վերաբերյալ գետնից չհանելով իմանում ենք, որ դղեակ բառը շատ հին ժամանակներից է գործածված հայ մատենագրության մեջ։ Աղաթանգեղոսի, Փարպեցու և Նղիշեի երկերում դղեակ բառը հաճախ է հանդիպում։ «Աղաթանգեղոսի կրկնագիր բնագրի» մեջ (տես՝ «Հուշարձան», 118a) բառս ունի նաև դղեկ ձևը։

Դղեակ կամ դղեկ բառը, ինչպես հիշյալ, նույնպես էլ մյուս բառարաններում (Հովսեփ Արցախեցու, Առձեռն և այլն) բացատրված է իբրև «ամրոց, բերդ» (+ բարձր տեղում վրայ—Առձեռն), ուրեմն երկրի կամ որևէ բնակավայրի պահպանության որոշ շենք։ Այս շենքը միաժամանակ հանդիսանում էր և՛ արգելարան «հանցավորների» համար, ինչպես այդ երևում է Փարպեցու և Նղիշեի երկերից (տես՝ «Փարպեցի, 1904 թ. հրատ., էջ 89, 103...»)։

Դղեակ բառի ձևն ու նշանակությունը ակամայից հիշեցնում են մեզ հին վրացերենում գործածված დოღგ-ი բառը, որը հանդիպում է VIII—XII դ.դ. զրականության մի քանի հուշարձաններում։ Սրանցից ամենահինն է Հովհանես Սարանիսձեի «Վկայաբանութիւն Հարո Տփղիսցւոյ», որը գրված է VIII դ. վերջին։ Վկայաբանության հեղինակը, երբ պատմում է Հարոյի մարմինն այրելու մասին, հաղորդում է.

«Նւ իբրև հանին սուբբ մարմինն սրբոյն արտաքոյ քաղաքին և առեալ ի տեղին, որում սագոդերել (= զողորանոց) կոչէին, զի անդ են գերեզմանք մարդկան քաղաքին, իջուցին այն ի սայլոյ անտի և եղին ի վերայ երկրի։ Նւ բերեալ զփայա և զխոտ և զնաւթ ածին ի վերայ մարմնոյ սրբոյն. և լուցանէին զհուր մինչև այրեցին զմարմին սրբոյ վկային ի տեղին, որ է յարեւելս բերդի քաղաքին, որում անուն է դիլեզ [դիղեզ, var. սադիլեզ], յափն վիմի, որ է դար, վէմ գետոյն մեծի, որ անցանէ յարեւելից ընդ քաղաքն, որում անուն է Մտկուարի (— Կուր)»։

[Ըստ ակադ. Կ. Կեկելիձեի հրատ., էջ 74—75]։

Վրաց պատմությանը զբաղվող մասնագետներն արդեն նկատել են, որ քաղաքի բերդը, որում անուն է դիլեզ (դիղեզ), վերը բերված հատվածի ցուցումների համաձայն, պետք է լինի Թբիլիսիի այն մասը, որը հնում Խոան անունն էր կրում, հավանաբար՝ այժմյան Մետեխը։

Ի՞նչ էր նշանակում դիլեգ: XVII—XVIII դ.դ. վրաց հոշակավոր բառաբանագետ Սուլխան-Սարա Օրբելիանին այս բառը բացատրում է իրրև քանտ կապյալների համարձակությամբ բառս դործածված է «Հարանց վարք»-ի այն խմբագրության մեջ, որը X դ. հունարենից թարգմանել է հայտնի Նվթվիմի Աթոնելին (Վրաստանի Պետական թանգարանի ձեռագրերի A ֆոնդ, № 35, 2930.), որի համապատասխան տեղը հայերեն «Հարանց վարք» մեջ (Վենետիկ, 1855 թ. II հատ., էջ 142, 9) պարունակում է քրանտ՝ Իերդի կամ նրա ինչ-որ մասի նշանակությունն ունի դիլեգը, և XII դ. վրացերեն մի կիսաինքնուրույն երկի մեջ էլ, այն է՝ «Վիրամիանի»-ում (II հրատ., էջ 153), Այսպես, ուրեմն, «դիլեգը» հին վրաց դրականության մեջ նշանակում էր, առաջին հերթին, քրեյ, և հետո՝ «քանտ»՝ Վերջին իմաստով այս բառը գոյություն ունի վրացերենի ազդակից լեզուներում, ինչպիսիք են՝ սվաներեն (ռուլոգ-ի ռուլլոգ-ի — տ. *Нужарадзе*, *Русско-сванский словарь*) և մեգրելերեն (ռուլոգ-ի. պրոֆ. Վ. Թոփուրիայի հաղորդությամբ), անկասկած, վրացերենից փոխառյալ

Դիլեգ (դիլեգ) բառը, որը, անշուշտ, դիլեգ, դիլեգ բառին է նման, հայերեն ձևի հետ միասին մի աղբյուրից պետք է բխած լինին: Այդ աղբյուրը իրանական լեզուն է, հավանորեն՝ պահլավերենը: Արդեն պրոֆ. Հր. Անադյանը մատնանշել է իր «Արամատական բառարան»-ում (դիլեգ բառի տակ), որ կարելի է հայերեն դիլեգ-ը կապ ունի նոր պարսկերենի *دله* *dula*-ի (= բարձր բուր, գոյակների համար) հետ: Վրացերեն ուիլեգ (դիլեգ) — ռուլոգ-ի նույնպես գեպի իրանական լեզուն է մեղ տանում: Այն տարրերությունը, որ կա բառի վրացերեն և հայերեն ձևերի միջև, ըստ իս, պետք է բացատրել նրանով, որ սրանք իրարից անկախ են փոխառած պահլավերենից: Ճիշտ է, պահլավերենից վրացերենի մեջ անցած բառերը մեծ մասամբ ձևով շատ մոտիկ են նույն աղբյուրից առաջացած հայերեն բառերին, որ և ներշնչում էր լեզվաբաններին այս տեսակի վրացերեն բառերը համարել հայերենի միջոցով փոխառած, բայց նորերս Մցխեթյում հայտարարված պահլավերեն արձանագրությունները¹ ցույց են տալիս, որ հին ժամանակներում Արևելյան Վրաստանը, այսինքն հին Իրերիան, իրանական աշխարհի հետ անմիջականորեն էլ սերտ առնչություն է ունեցել: Իսկ պահլավերեն ձևը, որ մեղ ավանդված չէ, կարելի է վերականգնել վրացերենի և հայերենի միջոցով: Վրացերենը, հակառակ հայերենի, պահում է պահլավերեն բառը խոանց աղման, հայերենն էլ, իր հերթին, անփոփոխ է պահել պահլավերեն բառի վերջին բաղաձայնը՝ *K*, մինչդեռ վրացերենում այդ դարձել է՝ *g*, *მარეწი*, դիլեգ, դիլե-ի և ռուլլոգ-ի տվող պահլավերեն մայր ձևը պիտի լիներ *dilek* կամ *dilyak*.

¹ *Տե՛ս, առաջմ*¹ 1. Акад. А. Т. Шанидзе, Данные греческо-пехлевийской билингвы из Армази для истории термина *ეზოისმოდგუარი* Эзоисмодзгуари в древнегрузинском. (Сообщения Акад. Наук Грузинской ССР, т. 1—2, 1941 г., стр. 181—187). 2. Проф. Г. В. Церетели, Армазская билингва ... Тб. 1941.